

ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ – ՏԻՐՊՈՐՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆՑ ԿԵԴՐՈՒ
4901 EVERGREEN ROAD
DEARBORN, MI 48128-1491
(313) 593-5181

ՄԱՍԼՈՑ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ / ՄԱՍԼՈՑ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ / ՄԱՍԼՈՑ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲՐԻՏԱՆԱՑԻ ԼՐԱԳՐՈՂ ՌՈՊՈՐՏ ԳԻՍՔ ԵԼՈՅԹ Կ՝ՈՒՆԵՆԱՅ ՄԻՇԻԿԸՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ–ՏԻՐՊՈՐՆԻ ՄԷՋ

Տիրպորն, Միչիկըն, 23 Յունուար 2007 – Չորեքշաբթի, 20 Դեկտեմբեր 2006ին, բրիտանացի լրագրող Ռոպորթ Գիսք` «Միջին Արեւելք. Յարատեւող Հակամարտութեանց արձաններն ու իրողութիւնները» թեմային շուրջ, բանախօսեց Միչիկընի Համալսարան–Տիրպորնի «Քոչոնֆ» սրահին մէջ հաւաքուած խոսնակներում բազմութեան մը առջեւ: Այս երեկոյթը մէկ Հանգրուանն էր հիւսիսամերիկեան ցամաքամասի երկայնքին Ֆիսքի դասախօսական շրջապտոյտին, որուն ընթացքին ան հանրութեան կը ներկայացնէր իր վերջին, «Յանուն քաղաքակրթութեան Մեծ Պատերազմը. Միջին Արեւելքի նուաճումը» խորագիրը կրող երկասիրութիւնը: Տիրպորն քաղաք կատարած Ֆիսքի կարճատեւ այցելութիւնն ու սոյն դասախօսութիւնը կը հովանաւորէին Միչիկընի Համալսարան–Տիրպորնի Հայագիտական Հետազոտութեանց ու Արաբ–Ամերիկեան Ուսմանց Կեդրոնները, ինչպէս նաեւ Միչիկընի Հայ Դատի Յանձնախումբը: Շուրջ 350-ի հասնող խանդավառ ներկաները մեծ մասամբ համալսարանի դասախօսներ եւ ուսանողներ էին, տեղւոյն հայ եւ արաբ համայնքներու անդամներ: Անոնց համար դասախօսութենէն առաջ կազմակերպուած էր կարճ հիւրասիրութիւն:

Օրուան բանախօսը հանրութեան ներկայացուց Միչիկընի Համալսարան–Տիրպորնի տնօրէն Դոկտ. Տանիէլ Լիթլը: Վերջինս ուրախութիւն յայտնեց, որ համալսարանը հիւրընկալած է Ֆիսքի տարողութեամբ յաջողակ ու միաժամանակ սրամիտ լրագրող մը: Նախքան Դոկտ. Լիթլըի ներածականը, բարի գալուստի խօսքերով հանդէս եկան Արաբ–Ամերիկեան Ուսմանց Կեդրոնի վարիչ Դոկտ. Ռապապ Ապտուհատի եւ Հայագիտական Հետազոտութեանց Կեդրոնի վարիչ Դոկտ. Արա Սանճեան: Վերջինս յտակացուց թէ ինչո՛ւ Ֆիսքի աշխատութիւնները կարեւոր են ամերիկահայ համայնքին համար:

Ֆիսքը քաղաքական գիտութեանց բնագաւառէն ներս դոկտորի կոչում ստացած է Տապլինի Թրինիթի Քոլէճէն: Թէեւ անոր ելոյթը տեւեց շուրջ մէկուկէս ժամ, ներկաները հաճոյքով եւ առանց ձանձրոյթի որեւէ նշոյլի հետեւեցան անոր իւրաքանչիւր խօսքին: Ֆիսքի գլխաւոր միտքն այն էր, որ ներկայիս Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող դէպքերը աննախադէպ չեն: Նմանատիպ եղելութիւններ տեղի ունեցած են անցեալին, եւ այսօրուան դերակատարները յաճախ կը կրկնեն անցեալի սխալները: Ան իր տեսակէտը հիմնաւորելու համար շարք մը օրինակներ մէջբերեց իր վերջին աշխատութենէն: Միաժամանակ, Ֆիսք ընդգծեց թէ քաղաքական բոլոր գործիչները պէտք է հասկնան, որ պատերազմները առաջին հերթին տառապանք ու մահ կը նշանակեն, ոչ թէ՛ յաղթանակ կամ պարտութիւն:

Ֆիսք անդրադարձաւ նաեւ Հայկական Յեղասպանութեան: Այս մասին ան՝ «Առաջին Ողջակէզը» խորագրով, ամբողջ գլուխ մը յատկացուցած է իր վերջին գիրքին մէջ: Անցած երեսուն տարիներուն Պէյրութ բնակած միջոցին, Ֆիսք Հարցազրոյցներ վարած է ցեղասպանութենէն վերապրած բազմաթիւ Հայորդիներու հետ, այցելած ցեղասպանութեան թատերաբեմ հանդիսացած շարք մը վայրեր, ներառեալ՝ Տէր Զօր: Ան միաժամանակ բրիտանացի բազմաթիւ անհատներէ ձեռք ձգած է Հայկական Յեղասպանութեան վերաբերող վաւերացումներ: Ֆիսք նշեց թէ իր գիրքը, ներառեալ՝ Հայկական Յեղասպանութեան վերաբերեալ գլուխը, ներկայիս կը թարգմանուին թրքերէնի, եւ գիրքի թարգմանիչն ու հրատարակիչը հաւանաբար դատի կանչուին Թուրքիոյ քրէական օրէնսգիրքի 301 յօդուածի հիման վրայ՝ թրքութիւնը ստորնացնելու մեղադրանքով: Թէեւ Ֆիսք՝ իբրեւ Թուրքիայէն դուրս բնակող ոչ-թրքահայատակ անձնաւորութիւն, գերծ է նմանատիպ դատի կանչուելու վտանգէն, ան յայտարարեց թէ պատրաստ է ի պահանջել Հարկին Թուրքիա մեկնելու եւ թրքական դատարանին առջեւ կանգնելու:

Բանախօսը միաժամանակ մեկնաբանեց թէ արեւմտեան զանգուածային լրատուութեան միջոցները ինչպէս համաշխարհային եղելութիւնները կը մեկնաբանեն իրենց ունկնդիրներուն՝ թուարկելով օգտագործող որոշ միջոցներ, որոնք կը միտին անջրպետ գոյացնել ընթերցողին եւ մամուլոյ քննարկման առարկայ եղող «այլոց» միջեւ, վերջիններս լուսանցքայնացնել եւ իբրեւ օրինազանց ներկայացնել: Շարունակելով նոյն միտքը, Ֆիսք ընդգծեց, որ Հիւսիսային Ամերիկայի եւ Արեւմտեան Եւրոպայի կառավարութիւնները յաճախ իրական կամ հնարաւոր ահաբեկչական արարքները կ'օգտագործեն իրենց քաղաքացիները «այլոց» վախով համակուած պահելու համար, որպէսզի անոնք ենթակայ մնան իրենց կառավարութեան եւ վերջինիս ներկայացուցիչներուն: Ֆիսք խոստովանեցաւ թէ անցանկալի անձնաւորութիւն դարձած է տարբեր երկիրներու ղեկավար շրջանակներուն. օրինակ, երբ սուրիական զօրքերը Լիբանան կը գտնուէին, սուրիական բանակի հետախուզական բաժնի պետի հրահանգով իր հեռաձայնի գիծը կը գտնուէր մշտական հսկողութեան տակ:

Աւելի ուշ, Ֆիսք ներկաներուն ցուցադրեց Լիբանանի մէջ իր լրագրողական գործունէութեան մասին տեսաներից մը: Ան յայտնեց թէ հաճոյքով կը շարունակէ սոյն մասնագիտութիւնը, որովհետեւ այդպիսով ինքզինք պատմական դէպքերուն կերտման անմիջական ականատեսը կը զգայ: Տեսաներիցի առաջին հատուածը սուրիական զօրքերու Լիբանանէն հեռանալուն մասին էր, երկրորդ մասը՝ Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի դէմ գործադրուած ոճիրին, որ տեղի ունեցած է այդ միջոցին Ֆիսքի գտնուած վայրէն ընդամէնը մի քանի հարիւր մեթր հեռաւորութեան վրայ: Տեսաներիցի վերջին մասը կը պատմէր 2006ի ամրան Իսրայէլի եւ Հրգպալլայի միջեւ ռազմական ընդհարման նախօրեակին դէպի Լիբանանի հարաւը եւ այնտեղ գտնուող ՄԱԿի դէտերու կեդրոն մը Ֆիսքի կատարած մէկ այցելութեան մասին:

Ֆիսք իր բանախօսութիւնը եզրափակեց ըսելով. «Ճորճ Պուշ Կ'ըսէ թէ 19 ոճրագործներ (11 Սեպտեմբեր 2001-ին) վերջնականապէս փոխեցին աշխարհը»: Բայց, ինք՝ Ֆիսք պիտի չարտօնէ, որ Ճորճ Պուշ փոխէ իր աշխարհը, եւ «մենք ալ պէտք չէ թողունք, որ ան փոխէ մեր աշխարհը»:

Բանախօսութեան հետեւած Հարց-պատասխանի բաժինը շատ աշխոյժ էր: Դժբախտաբար, բաւարար ժամանակ չկար, որ Ֆիսք պատասխանէր բոլոր հարցերուն: Երեկոյթի աւարտին, ան ներկաներէն ցանկացողներուն համար մակագրեց իր «Յանուն քաղաքակրթութեան Մեծ Պատերազմը. Միջին Արեւելքի նուաճումը» եւ «Ցաւակցիլ ազգին. Լիբանանի առեւանգումը» գիրքերէն օրինակներ: